ԱԺԲԳ

# ՏԵՂԵԿԱՆՔ

## 2018-2020թթ. ՀՀ տնտեսությունը բնութագրող հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների վերաբերյալ (հունվար-հոկտեմբեր)

Տնտեսական ակտիվության ցուցանիշ (ՏԱՑ)՝ %










Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)




Տնտեսական ակտիվության ցուցանիշը 2020թ. հունվար-հոկտեմբերին 2019թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ (աճողական) կազմել է՝ 93.3%, 2019թ. հունվար-հոկտեմբերին 2018թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 107.1%, իսկ 2018թ. հունվար-հոկտեմբերին 2017 թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 105.8%:

Արդյունաբերական արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2020թ. հուվար-հոկտեմբերին կազմել է 1,627,800.2 մլն.դրամ, ինչը 2019թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 15,599.5 մլն. դրամով, իսկ 2018թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 219,049.4 մլն. դրամով:

Իրականացված շինարարության ծավալը (ընթացիկ գներով) 2020թ. հուվար-հոկտեմբերին կազմել է 271,082.7 մլն.դրամ, ինչը 2019 և 2018 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ պակաս է համապատասխանաբար 25,227.2 և 17,671.6 մլն. դրամով:

Առևտրի շրջանառությունը (ընթացիկ գներով) 2020թ. հուվար-հոկտեմբերին կազմել է 2,276,901.7 մլն. դրամ, ինչը 2019թ. և 2018թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ պակաս է համապատասխանաբար 289,439.4 և 31,896.0 մլն դրամով: Ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2020թ. հուվար-հոկտեմբերին կազմել է 1,413,730.9 մլն. դրամ, ինչը 2019թ. և 2018թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ պակաս է համապատասխանաբար 256,535.1 և 13,028.6 մլն դրամով:

Արդյունաբերական արտադրանքի ծավալի իրական աճը 2020թ. հունվար-հոկտեմբերին 2019թ. հունվար-հոկտեմբերի նկատմամբ կազմել է 100.5%, 2019 և 2018 թվականների, ինչպես նաև  2018 և 2017 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 108.8%-ի և 104.5%-ի պարագայում:

Իրականացված շինարարության ծավալի իրական աճը 2020թ. հունվար-հոկտեմբերին 2019թ. հունվար-հոկտեմբերի նկատմամբ կազմել է 86.7%, 2019 և 2018 թվականների, ինչպես նաև 2018 և 2017 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 104.5%-ի և 106.5%-ի պարագայում:

ԱԺԲԳ

## Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)







## Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)







Առևտրի շրջանառության իրական աճը 2020թ. հունվար-հոկտեմբերին 2019թ. հունվար-հոկտեմբերի նկատմամբ կազմել է 87.5%, 2019 և 2018 թվականների, ինչպես նաև 2018 և 2017 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 108.9%-ի և 109.6%-ի պարագայում. իսկ ծառայությունների ծավալի իրական աճը 2020թ. հունվար-հոկտեմբերին 2019թ. հունվար-հոկտեմբերի նկատմամբ կազմել է 87.2%, 2019 և 2018 թվականների, ինչպես նաև 2018 և 2017 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 115.1%-ի և 118.5%-ի պարագայում:

Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում գործունեության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2020թ. հուվար-հոկտեմբերին կազմել է 327,045.4 մլն.դրամ, ինչը 2019թ. և 2018թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 35,599.3 և 76,122.3 մլն. դրամով:

Մշակող արդյունաբերության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2020թ. հուվար-հոկտեմբերին կազմել է 1,074,111.8 մլն. դրամ, ինչը 2019թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 50,241.3 մլն դրամով, իսկ 2018թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամվ ավել է 148,946.8 մլն. դրամով:

Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում գործունեության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2020թ. հուվար-հոկտեմբերին կազմել է 208,672.1 մլն. դրամ, ինչը 2019թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 2,302.0 մլն դրամով, իսկ 2018թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 2,165.5 մլն. դրամով:

Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում գործունեության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2020թ. հուվար-հոկտեմբերին կազմել է 17,970.9 մլն.դրամ, ինչը 2019թ. և 2018թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ պակաս է համապատասխանաբար 3,259.5 և 3,854.2 մլն. դրամով:

Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում գործունեության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2020թ. հունվար-հոկտեմբերին 2019թ. հունվար-հոկտեմբերի նկատմամբ կազմել է 114.9%, 2019 և 2018 թվականների, ինչպես նաև 2018 և 2017 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 120.5%-ի և 87.0%-ի պարագայում:

Մշակող արդյունաբերության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2020թ. հունվար-հոկտեմբերին 2019թ. հունվար-հոկտեմբերի նկատմամբ կազմել է 97.1%, 2019 և 2018 թվականների, ինչպես նաև 2018 և 2017 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 108.0%-ի և 110.0%-ի պարագայում:

Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում գործունեության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2020թ. հունվար-հոկտեմբերին 2019թ. հունվար-հոկտեմբերի նկատմամբ կազմել է 100.4%, 2019 և 2018 թվականների, ինչպես նաև 2018 և 2017 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 99.7%-ի և 105.7%-ի պարագայում:

Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում գործունեության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2020թ. հունվար-հոկտեմբերին 2019թ. հունվար-հոկտեմբերի նկատմամբ կազմել է 84.7%, 2019 և 2018 թվականների, ինչպես նաև 2018 և 2017 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 97.1%-ի և 99.4%-ի պարագայում:

ԱԺԲԳ

## Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)




## Սպառողական գների ինդեքսը (ՍԳԻ) նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)




## Զուտ միջազգային պահուստներ (ԶՄՊ), ժամանակաշրջանի վերջի դրությամբ, մլն. դրամ







Մշակույթ, զվարճություններ և հանգիստ ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2020թ. հուվար-հոկտեմբերին կազմել է 300,782.0 մլն. դրամ, ինչը 2019թ. և 2018թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ պակաս է 94,259.8 և 15,652.2 մլն. դրամով:

Տեղեկատվություն և կապ ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2020թ. հուվար-հոկտեմբերին կազմել է 236,937.4 մլն.դրամ, ինչը 2019 և 2018 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 16,978.7 և 36,953.0 մլն. դրամով:

Ֆինանսական և ապահովագրական գործունեություն ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2020թ. հուվար-հոկտեմբերին կազմել է 387,294.4 մլն.դրամ, ինչը 2019 և 2018 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 27,307.1 և 90,033.8 մլն. դրամով:

Մշակույթ, զվարճություններ և հանգիստ ծառայությունների ծավալի իրական աճը 2020թ. հունվար-հոկտեմբերին 2019թ. հունվար-հոկտեմբերի նկատմամբ կազմել է 88.2%, 2019 և 2018 թվականների, ինչպես նաև 2018 և 2017 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 122.3%-ի և 134.4%-ի պարագայում:

Տեղեկատվություն և կապ ծառայությունների ծավալի իրական աճը 2020թ. հունվար-հոկտեմբերին 2019թ. հունվար-հոկտեմբերի նկատմամբ կազմել է 107.2%, 2019 և 2018 թվականների, ինչպես նաև 2018 և 2017 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 109.2% և 105.3%-ի պարագայում:

Ֆինանսական և ապահովագրական գործունեություն ծառայությունների ծավալի իրական աճը 2020թ. հունվար-հոկտեմբերին 2019թ. հունվար-հոկտեմբերի նկատմամբ կազմել է 108.0%, 2019 և 2018 թվականների, ինչպես նաև  2018 և 2017 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 117.5%-ի պարագայում:

ՍԳԻ-ն 2020թ. հունվար-սեպտեմբերին 2019թ. հունվար-հոկտեմբերի նկատմամբ կազմել է 100.9%, 2019թ. հունվար-հոկտեմբերին 2018թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 101.6%, 2018թ. հունվար-հոկտեմբերին 2017թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 102.7%: ՍԳԻ-ն 2020թ. հոկտեմբերին 2019թ. դեկտեմբերի նկատմամբ կազմել է 99.0%, 2019թ.հոկտեմբերին 2018թ.դեկտեմբերի նկատմամբ՝ 98.4%, 2018թ.հոկտեմբերին 2017թ.դեկտեմբերի նկատմամբ՝ 99.3%:

Զուտ միջազգային պահուստները (ԶՄՊ) 2020թ. հոկտեմբերի վերջի դրությամբ կազմել է 845,056.0 մլն դրամ, ինչը 25,912.0 մլն. դրամով կամ 3.0%-ով պակաս է 2019թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 248,873.0 մլն. դրամով կամ 41.7%-ով ավել է 2018թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Աշխատանք փնտրողների թիվը 2020թ. հոկտեմբերի դրությամբ կազմել է 88356 մարդ, ինչը 4893 մարդով կամ 5.9%-ով ավել է 2019թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 6638 մարդով կամ 8.1%-ով ավել է 2018թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից: Պաշտոնապես գրանցված գործազուրկների միջին ամսական թվաքանակը 2020թ. հոկտեմբերի դրությամբ կազմել է 60416 մարդ, ինչը 1515 մարդով կամ 2.4%-ով պակաս է 2019թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 5582 մարդով կամ 8.5%-ով պակաս է 2018թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

ԱԺԲԳ

## ՀՀ արտաքին առևտրաշրջանառությունը և առևտրի հաշվեկշիռը (մլն ԱՄՆ դոլար)




## ՀՀ արտահանումը և ներմուծումը (մլն ԱՄՆ դոլար)




## Միջին ամսական անվանական աշխատավարձը աճողական, դրամ




## Պետական բյուջեի պակասուրդը/հավելուրդը և դրա ֆինանսավորման աղբյուրները, ընթացիք գներով, մլն դրամ




Արտաքին և փոխադարձ առևտրի առևտրաշրջանառության ծավալը 2020թ. հունվար-հոկտեմբերին կազմել է 5,689.0 մլն. դոլար, ինչը 731.5 մլն. դոլարով կամ 11.4%-ով պակաս է 2019թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 335.4 մլն. դոլարով կամ 5.6%-ով պակաս է 2018թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Արտաքին առևտրի բացասական հաշվեկշիռը 2020թ. հունվար-հոկտեմբերին կազմել է -1,580.7 մլն. դոլար, ինչը 540.5 մլն. դոլարով կամ 25.5%-ով պակաս է 2019թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 442.0 մլն. դոլարով կամ 21.9%-ով պակաս է 2018թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Արտահանաման ծավալը (ՖՕԲ գներով) 2020թ. հունվար-հոկտեմբերին կազմել է 2,054.1 մլն դոլար, ինչը 95.5 մլն. դոլարով կամ 4.4%-ով պակաս է 2019թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 53.3 մլն. դոլարով կամ 2.7%-ով ավել է 2018թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Ներմուծման ծավալը (ՍԻՖ գներով) 2020թ. հունվար-հոկտեմբերին կազմել է 3,634.9 մլն դոլար, ինչը 636.0 մլն. դոլարով կամ 14.9%-ով պակաս է 2019թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 388.7 մլն. դոլարով կամ 9.7%-ով պակաս է 2018թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Միջին ամսական անվանական աշխատավարձը (աճողական) 2020 թ. հունվար-հոկտեմբերին կազմել է 186428 դրամ, ինչը 7714 դրամով կամ 4.3%-ով ավել է 2019թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 17910 դրամով կամ 10.6%-ով ավել է 2018թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

2020թ. հունվար-հոկտեմբերին ՀՀ պետական բյուջեի պակասուրդը կազմել է -205,896.3 մլն. դրամ, ընդ որում, ներքին աղբյուրների հաշվին ֆինանսավորումը՝ 228,142.0 մլն. դրամ, արտաքին աղբյուրների հաշվին ֆինանսավորումը՝ -22,245.7 մլն. դրամ: 2019թ. հունվար-հոկտեմբերին ՀՀ պետական բյուջեի հավելուրդը կազմել է 58,642.9 դրամ: Ընդ որում ներքին և արտաքին աղբյուրների հաշվին ֆինանսավորումը կազմել է համապատասխանաբար -27,130.8 և -31,512.1 մլն դրամ: 2018թ. հունվար-հոկտեմբերին ՀՀ պետական բյուջեի պակասուրդը կազմել է -34,786.6 մլն. դրամ, ընդ որում, ներքին և արտաքին աղբյուրներից ֆինանսավորումը կազմել է համապատասխանաբար 74,790.7 և -40,004.1 մլն. դրամ: